ՓԻՏ ՍԵՐՎԻՆԿԱ
(PETE CERVINKA)
ՏՆՕՐԷՆ

Գալիֆորնիայի նահանգ – Առողջութեան և մարդկային ծառայութիւններու գործակալութիւն
**Զարգացման ծառայութիւններու բաժին**
1215 O Street, Sacramento, CA 95814
www.dds.ca.gov

ԳԷՎԻՆ ՆՅՈՒՍՍ
(GAVIN NEWSOM)
ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

2025 թվականի հունվարի 16-ին G-2024-Ինքնորոշման ծրագիր-002 ՎԵՐԱՆԱՅՎԱԾ

ՈՒՄ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐ

ԹԵՄԱ՝ 2024-25 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

*2024 թվականի դեկտեմբերի 27-ին հրապարակված G-2024-Ինքնորոշման ծրագիր-002 նամակը սույնով ենթարկվում է փոփոխության, ինչպես ներկայացված է Հավելված Ա-ի 3-րդ էջում՝ գծիկավոր և ընդգծված թեքատառերով: Այլ փոփոխություններ չկան:*

Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգրքի (WIC) 4685.8(f) բաժնի համաձայն, միջոցները հատկացվել են տարածաշրջանային կենտրոններին 2024-25 ֆինանսական տարվա ինքնորոշման ծրագրի (SDP) համար՝ 2024թ. սեպտեմբերի 6-ին A-1 պայմանագրում փոփոխությունների հատկացման միջոցով: Այս նամակի նպատակն է ներկայացնել ուղեցույցներ այդ միջոցների օգտագործման վերաբերյալ, ներառյալ տեղական կամավորական խորհրդատվական կոմիտեների (LVAC) հետ անհրաժեշտ համագործակցությունը՝ տեղական ֆինանսավորման առաջնահերթությունները որոշելու հարցում: Այդ հատկացումը չի ներառում Նահանգային ինքնորոշման խորհրդատվական կոմիտեի ֆինանսավորումը:

WIC-ի 4685.8(f) բաժնում նշվում է, որ այդ միջոցները պետք է օգտագործվեն՝ SDP-ի մասնակիցների կարողությունը առավելագույնի հասցնելու՝ սեփական կյանքը կառավարելու, ինչպես նաև հնարավորություն ընձեռելու Վարչությանը և տարածաշրջանային կենտրոններին՝ ծրագիրը հաջողությամբ իրականացնելու գործում: Օրենքն նաև պահանջում է, որպիսզի միջոցներն ուղղվեն մասնակիցների կարիքները բավարարելու համար, ծառայությունների մատչելիությանն ու արդարության բարձրացմանը, անհավասարությունների նվազեցմանը, ինչպես նաև ծրագրի իրականացման, այիդ թվում՝ հետևյալ կետերի հետ կապված ծախսերը՝

- Անձակենտրոն պլանավորման և ինքնակառավարման (SD) մասնագետների հավաքագրումը և վերապատրաստումն աջակցում են ծառայություններ մատուցողներին և անկախ միջնորդներին՝ հատուկ նշանակություն տալով երկլեզու և երկմշակութային ծառայություններ մատուցողների թվի ավելացմանը.
- Համատեղ վերապատրաստում մասնակիցների, ընտանիքների, տարածաշրջանային կենտրոնների, LVAC անդամների և այլոց համար՝ հատուկ նշանակություն տալով սեփական անձի պաշտպանության վերապատրաստմանը և տարբեր համայնքների ընտանիքների վրա, որոնք անբավարար չափով են ներկայացված SDP-ում.
- Աջակցություն ծախսերի պլանի մշակմանը.
- Համագործակցային խմբեր/սեմինարներ՝ շարունակական համագործակցային ուսուցման և խնդիրների լուծման հնարավորությունների խթանման համար. և,

- Գործատուների վերապատրաստման դասընթացներ/սեմինարներ՝ համատեղ գործատու և անհատ գործատու մոդելների կիրառմամբ հետաքրքրված մասնակիցներին վերապատրաստելու համար:

LVAC-ները կարևոր դեր են խաղում SDP-ի իրականացման և վերահսկման գործում: Հետևաբար, տարածաշրջանային կենտրոնները և LVAC-ները պետք է համագործակցեն՝ առաջնահերթություն տալով առկա միջոցների օգտագործմանը՝ տեղական մասնակիցների կարիքները բավարարելու համար: Միջոցները կարող են ծախսվել միայն տեղական կարիքների շուրջ համաձայնության գալուց հետո: Ֆինանսական միջոցների հնարավոր օգտագործման, 2024-25 ֆինանսական տարվա համար յուրաքանչյուր տարածաշրջանային կենտրոնում հասանելի ֆինանսավորման չափի և միջոցների օգտագործումը որոշելու համար առաջարկվող քայլերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս Հավելված Ա:

Եթե մասնակիցները և/կամ նրանց ընտանիքները հարցեր ունեն այս նամակի վերաբերյալ, նրանք պետք է դիմեն իրենց տարածաշրջանային կենտրոնին: Տարածաշրջանային կենտրոններից հարցերը պետք է ուղղվեն Վարչության Ինքնորոշման ծրագրի մասնաճյուղ՝ sdp@dds.ca.gov հասցեով:

Հարգանքներով՝

*Բնօրինակը ստորագրել է՝*

ՄԻՉԻ Է.  ԳԵՅԹՍ (MICHI A. GATES, Ph.D.)
Ծրագրային ծառայությունների գլխավոր տնօրենի տեղակալ

Հավելված

cc: Տարածաշրջանային կենտրոնի ադմինիստրատորներ
Տպառողական ծառայությունների տարածաշրջանային կենտրոնների տնօրեններ
Տարածաշրջանային կենտրոնների համայնքային ծառայությունների տնօրեններ
Տարածաշրջանային կենտրոնների գործակալությունների ասոցիացիա
Զարգացման հաշմանդամության ծառայությունների նահանգային խորհուրդ
Փիթ Սերվինկա (Pete Cervinka), Զարգացման ծառայությունների բաժին
Կառլա Կաստանեդա (Carla Castañeda), Զարգացման ծառայությունների բաժին
Էռնի Քրուզ (Ernie Cruz), Զարգացման ծառայությունների բաժին
Ջիմ Նայթ (Jim Knight), Զարգացման ծառայությունների բաժին
Քեթլին Դեմփսի (Kathleen Dempsey), Զարգացման ծառայությունների բաժին